

ist von den Nachbarsprachen isoliert (A 82) und ebenso, durch seine Bedeutung, *nist* „Sitz“ (A 73).

Es ist ganz klar, daß es sich bei einer Zusammenfassung einer so kleinen Anzahl von Wörtern, wie es die vorliegenden 89 (wenn man nur die Stichworte zählt) sind, nur um ein ganz vorläufiges Ergebnis handeln kann. Daß aber gerade die Gruppe A vom dialektologischen Standpunkte aus mitunter von sehr großem Interesse sein kann, wurde oben (unter Nr. 49 *ferm*) betont. Der Einteilungsgesichtspunkt nach Sachgebieten, der sich bei der Detailzusammenfassung in manchen Fällen aufdrängen möchte, soll erst am Schlusse in der Gesamtüberschau zur Sprache kommen. Die große Schwierigkeit bleibt immer bestehen, wie man die Individualität, die jedes Wort darstellt, in einer Zusammenfassung ausdrücken soll, wie man Qualitatives in letzthin Quantitatives verwandeln soll⁹⁹. Trotzdem möchte ich mit allem Vorbehalt das folgende Ergebnis anführen: es handelt sich um die Reihung der Sprachen nach der absoluten Häufigkeit der Übereinstimmungen. Mit der größten Anzahl von Entsprechungen begonnen ist die Reihenfolge diese:

1. Griechisch
2. Altindisch
3. Lateinisch
4. Iranisch
5. Baltisch
6. Tocharisch
7. Germanisch
8. Slawisch
9. Albanisch
10. Phrygisch
11. Thrakisch
12. Illyrisch
13. Hethitisch
14. Keltisch

⁹⁹ Die statistische Behandlung des Problems der Sprachverwandtschaft haben bisher besonders polnische Forscher versucht: Czekański und Moszynski; cf. Language 13 (1937), p. 83, Anm. 1; Collinder, La parenté linguistique et le calcul des probabilités in: Sprakvetenskapliga Sällskapets i Uppsala Förhandlingar 1946—1948, p. 1—24 (skeptisch); cf. auch Pisani, Lingua 3 (1952) p. 1 ff.

Hierzu ist zunächst zu bemerken, daß die einzelnen Punkte (durch deren Summation obige Reihung gewonnen wurde) durchaus ungleichwertig sind: Ein Beispiel kann mehr bedeuten als zehn andere: Immerhin ist soviel klar, daß die Hauptstützen für die armenische Etymologie im Griechischen und Indischen verankert liegen. Beachtlich ist wohl auch die hohe Reihung des Tocharischen, wenn man bedenkt, wie groß die Schwierigkeiten der etymologischen Deutung dieser Sprache sind. Merkwürdig ist aber die geradezu antithetische Stellung von Armenisch und Hethitisch Mehr soll hier nicht präjudiziert werden.

Georg R. Solta

ՄԱՂՍԷՍ ԳՆՍԵՈՒԹԵՐՆԵՑԻ (ԿՈՉՈՒՇԻ ԿԸՂԱՆԿԵՏՈՒՅՑԻ) ԵՒ ԻՐ ՊԸՏ-ՄՈՒԹԻՆՆ ԸՂՈՒՇՆԻՑ

(Շարունակութիւն:)

5.

Վաչական արքայ Աղուանից: Յայտնութիւնք նշխարաց սրբոց: Մատթէ երէց. Արքահամ եպիսկոպոս Մամիկոնից: Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց:

(Ա. 5, 6, 14, 16—26. Բ. 5:)

1. Պատմագրին համաձայն Աղուանից աշխարհը 30 տարի անոնց թագաւորի մնացած է, այսինքն Վաչէի հրաժարումէն մինչև Վաչականի գահակալութիւնը (Ա. 16): Վաչէ գահէն հրաժարած էր Պերոզի Ե. տարւոյն, այսինքն 462ին. ուստի անիշխանութեան այս 30 տարիները կ'իյնան 462—492: Վաչականը կը տիրանայ գահին Վաղարշ արքայի (484—488) օրով, հաւանօրէն 485ին: Հետեւաբար «30 տարիները» մտաւորապէս ճիշդ են:

Վաչական Վաչէի Յագիերտ եղբոր որդին էր. Պերոզի օրով ահամայ ընդունած մոզական գէնը: Երբ կը շնորհէ Վաղարշ կրօնի սպասուիթիւն, Վաչական կը վերընդունի քրիստոնէութիւնը: Իր գահակալութիւնը կը

գուգարիպի Վահան Մամիկոնեանի մարդապանութեան առաջին տարիներուն:

Իր օրով կը վայելէ Աղուանից աշխարհը խաղաղութիւն. կը բարգաւաճի երկրին մէջ քրիստոնէութիւնը. կը բացուին դպրոցներ: Վաչական կը բառնայ «գլխիդ աղանդն մատնահատութեան» (Ա. 18): Այս շրջանին տեղի կ'ունենան «Յայտնութիւն նշխարաց սրբոյն Չաքարիայ հօրն Յովհաննու եւ երանելոյն Պանոսիոնի» (Ա. 19). «Գիւտ նշխարացն սուրբ մանկանն Գրիգորիսի» (Ա. 20—23). եւ Գիւտ նշխարացն վկայից Գիւգիսայտի, «որ ի ժամանակս Վաչականայ արքայի... յայտնեցան» (Բ. 5). կը բերուին Ս. Գրիգորի եւ Ս. Հռիփսիմէի եւ Գայիանեանց նշխարները (Ա. 21): Թագաւորս կը դումարէ յԱղուէն, թագաւորական ամբարնոցի մէջ եկեղեցական ժողով, ուր կանոններ կը սահմանուին (Ա. 26):

Կըսուի թէ իր օրով կենդանի էր «Յավաղէն Աղուանից արքայի պոռնկորդին Սոճկորիկ», որ կողմնակալ մըն էր (Ա. 23):

Վաչական կը հետաքրքրուի խմատասիրական-աստուածաբանական հարցերով. հարցումներ կ'ուղղէ Մատթէ երէցին, Մամիկոնեաններու Արքահամ (եւ Սիւնեաց Պետրոս) եպիսկոպոսներու եւ կը ստանայ զբաւոր պատասխաններ (Ա. 24, 25):

Կը վկայէ Աղուանից պատմիչը, թէ «Քաջն Վարդան ի Միհրանեան տոհմէն, որ յաւուրս Վաչականայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարքայէն նախագահ եղեալ՝ բնաւորեցաւ ի Գարդման. եւ Պատրիկ ի Քարդայեան (նախնիք սորա) ի յարքայիցն Պարսից, որք ի նորին հրամանէ Վաչականայ արքայի բնակեցան յԱղբիղ գաւառի» (Գ. 10):

Վաչականի մահուան ոչ պարագաներն եւ ոչ տարին յիշուած են: Իրմով կը վերջանայ Աղուանից թագաւորութիւնը:

Այս տուեալները, զորոնք յառաջ բերի Աղուանից Պատմութեանէն, զժուարաւ կը դիմանան քննադատութեան եթէ փորձենք մի առ մի վերլուծել: Նախ չունինք որ եւ է վկայութիւն ժամանակակից հայ եւ օտար աղբիւրներու մէջ «Աղուանից Վաչական բարեպաշտ արքայի» գոյութեան մասին: Այն ամէնը, ինչ որ կը պատմուի Աղուանից Պատմութեան մէջ լայնօրէն՝ վիպական նկարագիր կը կրէ: Չեմ գտներ հոն պատմական կորիզ:

Վաչական պէտք է ծնած ըլլայ իրր 460ին. գահակալած իրր 485ին, վախճանած իրր 570ին. ուստի իրր 110ամեայ:

Եթէ իր օրով կենդանի էր Սոճկորիկ կողմնակալն» որ Արավաղէն արքային «պոռնկորդին» կը ներկայացուի (Ա. 23), 560, Յովհաննէս Բ. Հայոց կաթողիկոսի օրով, ըլլալու էր անուազն 140 տարեկան, որովհետեւ Արավաղէն կ'ապրէր Ե. դարու առաջին քառօրդին: Անհաւատարի է առհասարակ, թէ արքայածին մը այսպիսի փաղաքական անուն մը կրած ըլլայ:

Կը յիշուին Ս. Գրիգորի եւ Ս. Հռիփսիմեանց նշխարները, որոնք Հայաստանէն Աղուանք բերուած են: 618ին, երբ Կոմիտաս կաթողիկոս բացաւ Ս. Հռիփսիմէի դամբանը, գտաւ նշխարները կնքուած Ս. Գրիգորի եւ Ս. Սահակի կնիքներով: Աւելցուց անոնց վրայ իր ալ կնիքը: Ուստի 618էն յառաջ չէր կրնար Մատթէ երէց նշխարներ տաւած ըլլալ Աղուանք: «Քաջն Վարդան ի Միհրան տոհմէն», եթէ նախագահն եղած է Աղուէնի ժողովին, կ'ենթադրէ այդ ժողովը գումարուած է. դարու կէսին: Յովհաննէս Բ. կաթողիկոս ի Գարեղնից (557—574) իր թուղթին մէջ առ Արքա կաթողիկոս, գրուած իրր 568ին, որ եւ է ակնարկութիւն չ'ընել Վաչական բարեպաշտ արքայի մասին: Այդ նամակին տակ ստորագրած է նաեւ Արքահամ Մամիկոնեաններու եպիսկոպոսը, որ ըստ պատմագրին թղթակիցն եղած է Վաչականին:

Հարկադրուած եմ ըսելու, թէ Վաչական անուն թագաւոր գոյութիւն չէ ունեցած Զ. դարուն:

2. Մատթէ երէց Գարահոռոյ, գիտնաւոր: Մատթէ երէց յաճախ կը յիշուի Վաչականի պատմութեան մէջ. Վաչական «գտանէր դամեանսուրբ նշխարս Գրիգորիսի եւ յոյժ հռչակելոյն Հռիփսիմեայ եւ Գայիանեայ ի Գարահոռ գեղջ, որ էր ի նահանգին Արձախոյ, զոր էր բերեալ երկրուն Մատթէ անուն կոչեցեալ՝ ի Յոհաննէ Հայոց կաթողիկոսէն, զոր ունէր նորին մատանեա կնքեալ» (Ա. 20): «Ընդ աւուրան ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄատթէ երէցն Գարահոռոյ (տպ. Գարահանու) հանդերձ պաշտօնէութի Սուհան՝ պաշտօն անուել եւ պատարագս մատուցանել յանուն սրբոցն, որ անդ յայտնեցան: Եւ մինչդեռ գառաւօսին

Չայս կը յիշէ նաև Աղուանից պատմիչը (Բ. 52) ի բանից Անաստասի. «Անուանք վանորէից, որք յերուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն...: Պանդայ վանքն, որ յարեւելից կողմանէ Ձիթենեաց լերինն կայ. Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող. եւ այժմ Պետրոս աղուան քահանայ ունի»:

Այստեղ կը նստէր իբր 550էն ի վեր Թովմաս աղուան վանական: Չինքը կը յիշէ Երուսաղէմի Յովհաննէս Հայրապետ իր առ Արաս Թուղթին մէջ այսպէս. «Աստուածասէր Թովմաս Երանելոյ Պանոսյ վանաց վանական...» «Քարեպաշտ եւ աշխատասէր Թովմաս, որ ոչինչ պէտս ունի ի ձէնջ պատուի եւ մեծութեան, բայց միայն ողբոց ձերոց փրկութեան»: Սա մտերիմ յարաբերութեան մէջ տեղեւոյն Հայրապետներու հետ, յորդոր կարգացած է Եւտիքէս, Մակար եւ Յովհաննէս պատրիարքներուն թուղթեր գրելու եւ հրահանգներ տալու Աղուանից եւ Սիւնեաց եկեղեցիներուն: Ան թարգմանած է անոնց թուղթերը Հայերէնի եւ Աղուանից եւ Սիւնեաց թուղթերը յունարէնի, եւ այսպէս միջնորդ եղած է երկու կողմերու թղթակցութիւններուն. մինչև իսկ անձամբ թղթատարի գերը կատարած: Իր անունին ծանօթ է Աղուանից պատմիչը, երբ կը գրէ թէ Արաս «հարածեաց» ի տանէն Աղուանից գլխաւորութեան կրօնին այնմիկ՝ գլխավաս եւ գեղիայն եւ գինտան եւ գիրանն» (Բ. 8): Վերջին երեք անունները անձանօթ են այլուստ:

6. Յովհաննէս Բ. կաթողիկոս Գաբեղինցի: Այն թուղթերն եւ թելագրութիւնները, որոնք կը հասնէին Աղուանից եւ Սիւնեաց աշխարհները, կը լսուին Դուին: Այս միջոցին Սիւնիքը բաժնուած էր քաղաքականապէս Մարզպանական Հայաստանէն. երբ նաև եկեղեցին հեռացած Դուինի կաթողիկոսարանի իրաւասութենէն եւ յարաբերութեան մէջ մտած Աղուանից կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի պատրիարքութեան հետ: Այս շրջանին էր, որ մասհոգուելով Դունոյ աթոռը, փորձեց իր նախկին իրաւասութիւնը արժեցնել Սիւնիքի եւ Աղուանից վրայ: Յովհաննէս Բ. կաթողիկոս գրեց երկու Թուղթ, մին Սիւնեաց Վրթանէս կաթողիկոսին եւ միւսը Աղուանից Արաս կաթողիկոսին: Առաջին թուղթին մէջ կը յիշուին 6 խորհրդակից կաթողիկոսներ, անոնց թուին մէջ նաև «Արդիւնոյ Ասորեաց ուղղափառաց կաթողիկոս»:

Իսկ երկրորդ թուղթին մէջ 10 կաթողիկոսներ, անոնց թուին մէջ դարձեալ Արդիւնոյ կաթողիկոս:

Սիւնեաց կը յիշեցնէ կաթողիկոսը 554/5 տարուց Դունոյ ժողովը, որ գումարուած էր Խուժիկ-Նեստորականներու (Մանիքեցիներու) համար եւ թէ ինչպէս «միարանութեամբ զպիղծ Նեստորիանոսս եւ զՔաղկեդոնիսս եւ զայլ հերձուածողս ի մեր սուրբ եկեղեցւոյս նդովիւք հարձական արարաք... պայման արարաք ամենեւիմք հեռանալ ի հարդուութենէ նոցա»:

Այդ ժողովի գործը հասած է մեզի. հոն խօսքը Խուժիկ-Նեստորականներու, այսինքն Պաղկեղեաններու մասին է, եւ որ եւ է ահանարկութիւն չէ եղած «Քաղկեղոնիսներու եւ այլ հերձուածողներու» մասին:

Շարունակութեան մէջ կը գրէ կաթողիկոսը «ի հաւատարիմ մարդկանէ լուաք, եթէ պեղծ Նեստորականք բազումք եւ ի ձեր աշխարհից բնակեալ են. եւ դուք զգոսս ի սուրբ եկեղեցիս ընդունէիք եւ ընդ նոսա հարդուէիք... զլուսաւոր եւ զճշմարիտ հաւատ գործք եւ դուք ընկալաք եւ այժմ ունիմք, զհոգեւոր սէր գոր ընդ ձեզ ունէաք, առաւել քան զամենայն զայդ հող յանձին կալաք հեռացուցանել եւ ի ձէնջ զչարի որոմանն սերմանս...: Չպիղծ Նեստորիանոսսք եւ զայլ հերձուածողս որ յաշխարհից ձերում են, նոյնպէս եւ ի սրբոյ եկեղեցւոյ եւ ի ձեր հարդուութենէ նդովիւք ի բաց մերժեցէք» (Գիրք Թղթոց, էջ 78—80):

Այստեղ Նեստորականք եւ Քաղկեղոնիսք նոյնացուած են:

Մատթէոս քահանայ, որ Թուղթս տարած է Սիւնիք, թղթատարն եղած է նաև առ Արաս Թուղթին:

Աղուանից գրուած թուղթը կը սկսի.

«Լաւաց եւ ճշմարտից աստուածասիրաց սիրելի եղբարց եւ աթոռակցաց մերոց Արասու Պարտաւայ կաթողիկոսի, Մովսէսի Բախաղատու կաթողիկոսի, Գրիգորի Կապաղահանու կաթողիկոսի, Հոռոմակայ Ամարասու կաթողիկոսի, Տիմոթէի Բաղասականու կաթողիկոսի, Ամբակումայ Շաբոյ կաթողիկոսի, Յոհաննայ Գարգմանայ կաթողիկոսի, Ղեւոնդի Մեծկողմանց կաթողիկոսի, ի Յովհաննիսէ Հայոց կաթողիկոսէ, յԱրասամայ Տարաւնոյ եւ Մամիկոնեանց կաթողիկոսէ...»

յԱրդիւնոյ Ասորեաց ուղղափառաց կաթողիկոսէ...»:

«Քանզի եհաս առ մեզ լուր դժնդակ համբաւոյ, եթէ են ոմանք գայլք յափշտակողք զգետու ոչխարաց, որք եկին յաշխարհ ձեր ի վանաց պղծոյ Պետրոսի, որ անուամբ Աղքատասէր կոչի եւ գործով քրիստոսատեաց եւ ուրացող գուրը Երրորդութիւնն, զչար որոմն անիծելոյն Նեստորի եւ զժողովոյն Քաղկեղոնի անարգելարար սերմանն յոգիս անմեղաց, թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյ...»: Կը յաջորդէ հաւատոյ Հանգանակ մը, որ հաւատարապէս ընդունելի է նաև Քաղկեղոնականներու համար: Բայց ոչ շարունակութիւնը, որ Միարնեայց յատուկ է. «Այսպէս հաւատամք եւ երկրպագեմք եւ փառարանելով ասեմք. Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Իսկ զոչ խոստովանողան այսպէս նդովեցին սուրբ հարքն, նմանապէս եւ մեք նդովեմք զհինս զամենեսան կղեալ հերձուածողս եւ զնորս. զԱրիս... եւ զպիղծն Նեստոր եւ զժողովորոսս եւ զժողովորիտոսս եւ զնոսի ժողովն Քաղկեղոնի եւ զՏումարն Լեւոնի, որ լրբարար յանդգնեցան ասել երկուս ընդթիւնս եւ երկուս դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ...: Նդովեմք... եւ զՍեւերոսս եւ զգիրս ապականութեան նորա...»: «Եթէ ոք եկեցէ սա ձեզ եւ զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տունս եւ մի բանիւ ողջոյն ասել նմա... զայնպիսին ի տանց եւ ի սահմանաց ձերոց հարածել եւ զմահարեր վարդապետութիւնն նոցա ամենեւին ոչ անել արժանի լսելութեան»:

Անշուշտ խոհեմազոյն գործած պիտի ըլլար կաթողիկոսը եթէ նախ ինքն ի գործ գրած ըլլար այս զգուշութիւններն եւ ճանապարհ ցոյց տուած ըլլար Արդիւնոյ կաթողիկոսին երթալ իր «Ասորեաց ուղղափառաց» եւ անոնց քով արժեցնել իր աստուածարանութիւնը: Այսպէս անաշխատ վերահաստատած պիտի ըլլար այն հաւատն, զոր Հոռոմք, Հայք, Վիրք եւ Աղուանք ունէին երբեմն: Այդ Յուրանիս Ասորիէն ուսան Երեցս Սրբասացութեան մէջ «որ խաչեցար» յաւելուածը եւ դարձեալ Քողկեղոնի ժողովն եւ Լեւոնի տումարն մերժել եւ թէ՛ ողորտոսը հերձուածողներու թուին մէջ նդովել, այն թէ՛ ողորտոսը, զոր մեր նախնիք 453/5 տարիներուն

իրենց բարի խորհրդատուն ճանչցած էին եւ իր հրահանգները խնդրած էին⁴:

Կաթողիկոսը կը վերջացնէ իր Թուղթը. «Արդ վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարանց մերոց եւ դուք մեզ, հաճոյ թուեցաւ զալ ի ձէնջ այսր կաթողիկոսաց երկից կամ աւելեաց, լսել ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն⁵»:

Արաս պատասխանեց այս Թուղթին, ինչպէս Narratio (տես վարը) կը հաւաստէ: Պատճենը չէ հասած մեզի:

7. Յովհաննէս Երուսաղէմի հայրապետին Թուղթն առ Արաս: Այս երկու Թուղթերուն պատճենները (Թերես Թովմաս, Եղիա, Բնոտ եւ Իրաս վանականներու ձեռքով) կը հասնին Երուսաղէմ: 575ին Երուսաղէմի Հայրապետ կ'ընտրուի Յովհաննէս: Թովմաս կը ներկայանայ Հայրապետին եւ կը հաղորդէ այդ նամակներու բովանդակութիւնը, խնդրելով իրմէ յորդորական-վարդապետական Թուղթ մը Արաս կաթողիկոսին համար: Յովհաննէս ընդատալ կու գայ անոր խնդրանքին, թէ և ակամայ, որովհետեւ տրամադիր չէր թղթակցիլ արտասահման, ուրիշ պետութեան (Պարսից) տակ ապրող անձի մը հետ: Գրութեան տարին չէ նշանակուած. բայց կը զգացուի թէ 575էն ոչ շատ վերջը գրուած ըլլալու է: Հոռոմայեցոց կայսրն է այս շրջանին Յուստինոս Բ. (565—578, հոկտ. 5), որ 574էն սկսեալ իրեն զահակից ունէր Տիրերիոս Բ.: Կ. Պոլսոյ պատրիարքն էր Յովհաննէս Գ. Անտիօքացի (565—577): Հայոց կաթողիկոսը՝ Յովհաննէս Բ. վախճանեցաւ Կ. Պոլիս, հաւանօրէն 574/6ին: Դուինի կաթողիկոսը՝ Մովսէս Բ. Եղիվարդեցի (574—604): «Հայոց պատերազմը» կը շարունակուէր տակաւին:

Այս նամակին հայերէն թարգմանութիւնը հոգացած է Թովմաս եւ ուղարկած կաթողիկոսին: Այս նկատմամբ որ եւ է խօսք չէ ըրած Աղուանից պատմագիրը, բայց նամակը առնուած է Թղթոց գրքին մէջ: Անոր հրատարակութիւնը կը պարտինք Կարապետ Վ. Տէր-Մկրտչեանի. ուսկից կու տամ այս տեղ քաղուածքներս.

⁴ Աղիւնեան, Կարմիրն Վարդան, Վեհնա 1951, էջ 151—153:
⁵ Գիրք Թղթոց, էջ 81—84: Պատմ. Աղուանից, Բ., 7 (էջ 137—142): Թղթիս «Յոստովանիմքը» յառաջ բերուած՝ Կնիք՝ հաւատոյ, 136—139. նոյնը «Յոստովանութիւն Հայոց գոր գրեցին առ ժողովն Եփեսոսի» խորագրով՝ էջմիածին, Թ. 3111, թղ. 24ա եւ 3771, թղ. 562բ:

«Այս թուղթ Յոհաննու Երուսաղէմի եպիսկոպոսի է առ Արաս Աղուանից կաթողիկոս:

Սրբոյ եւ աստուածասիրի Երանելոյ հոգեւոր եղբոր եւ պաշտօնակցի մերոյ Արասայ եպիսկոպոսի Աղուանից՝ ի Յոհաննէ եպիսկոպոսապետէ Երուսաղէմի: — Աստուածասէր Թումաս Երանելոյ Պանտոյ վանաց վանական ըստ սովորութեանն՝ որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալքս սուրբ աթոռոյն Յակոբայ Եղբոր Տեառն առեալ էր զիր Հաւատոյ եւ Կարգաց եկեղեցւոյ, նոյնպէս եւ ի մէջ խնդրեաց եւ մատոյց տոմարս երկուս ժողովոյ, որ առանց Քրիստոսի ժողովեալ էր ի Հայս հակառակ սրբոյ եկեղեցւոյ. եւ զանձինս իւրեանց ի ժառանգութեանէն Քրիստոսի ի բաց հանին: Չմին, զոր առաքեալ իսկ էր ի ձեր աշխարհ, զի որոգայթեացին զձեզ յիւրեանց կորուստն. եւ զմիւսն Սահման հաւատոյ իւրեանց ամբարշտութեանն: Յորում եւ ուսոյց զմեզ վասն բարեւէր կամաց Երանութեան քում, եթէ ընդ բարեւ ճանապարհ հաւատոյ եւ գործոյ ընթանաս. զոր մեր լուեալ յոյժ ուրախ եղաք: Բայց լուաք թէ ոմանք յիշխանութենէզ քումմէ ընկալան զայնպիսի սնտոսի եւ ստեղծական բանս խաբէութեան. եւ Սրբութիւնդ քո ոչ ել ի վերայ նոցա: Ո՞չ գիտես եթէ... ոչ է արժան տալ զփառս Աստուծոյ Եւտիքի եւ Եւտերի եւ Պետրոսի Անտիոքացւոյ եւ Յուլիանոսի Աղիկանացւոյ եւ ոչ զքաջութիւն Աստուծոյ Արգիշտի ասորոյ, որ եղեւ առաջնորդ կորուստեանն Հայոց եւ կամ ժողովոյն Հայոց...:

«Չորս եւ նոյնպէս եւ հարածեցի: եւ (ի) քաղաք(ի)ս գեո այրէր վանք (տպ: զվանսն) մի Հայոց մինչեւ հարածեալքն առ թագաւորն զնացին⁴ ասելով եթէ Հարածեաց զմեզ հայրապետն Երուսաղէմի: Իսկ Բարեպաշտութիւն նորա զրեաց առ մեզ, եթէ Բարեպարարեր ըստ կանոնաց զիրոյ ինդրելով. զի եթէ այդպիսեաց թոյլ ոք տացէ իւրեանց ամբարշտութեան եւ այլ ճարակ աստ գտանեն, զոր գծուար ոք կարէ ուղղել, մանաւանդ զարտաքին ազգ⁵, որ ոչ կարեն իմանալ զմիտս գրոց. եւ ըստ յառաջընկալ սովորութեան իւրեանց զչարափառութիւն իրրեւ զբարեպաշտութիւն համարին: Այլ եւ հերձուածդ իսկ Հայոց անդրու ի է եւ ընդ բա-

զում հերձուածս միաւորի: Եւ իրրեւ ի զրոց ինչ ոչ կարացին ցուցանել իշխանքն Հայոց, առ իս աղաչանս առաքեցին, եթէ առաջին թագաւորն զվանս զայն մեզ իրրեւ զպարգեւ շնորհեցին նովիմք ուսմամբն: Որոց արարի պատասխանի, թէ Անհնար է թագաւորաց հերձուածս պարգեւ շնորհել: Եւ ապա իրրեւ ոչինչ ելս գտեալ՝ լուեցին: Բայց զու իմով հրամանաւ զհերձուածողդ հան եւ զվանդ ուղղափառաց տուր. եւ յեկեղեցի որք կամէին ըստ եկեղեցւոյ լինել, եթէ եւ ձեռնադրաւ զհերձուածսն նոյնքն, մի արդելուք, այլ սիրով ընկալարուք, քանզի ազէտք են:

Այնպէս եւ ի հայրապետէ նորա⁶ գիր ընկալայ, եթէ Բարեպաշտ թագաւորս մեր ինձ ասաց, եթէ Վասն եկեղեցւոյ իրաց զիս աշխատ զի՞ առնէք. մեզ արտաքին իրաց եւ պատերազմաց է հոգալ. եկեղեցւոյ եւ ճշմարիտ հաւատոյ գործ եպիսկոպոսաց է. քննեցէք եւ հաստատուն պահեցէք եւ զիս եւ զաշխարհս: Իսկ ես կոչեցի զիշխանս Հայոց եւ բազում ինչ խօսեցայ: Եւ նոքա զԿեսարիայ կալան բարուրս: Եւ ես ասեմ. Թէ Կեսարիայն հաճոյ է ձեզ, երթայք, ի Կեսարիայն կացէք. բայց յերկուս քաղաքս թագաւորականս յայտնի հերձուածողի ոչ ամբք բնակել, ի յԵրուսաղէմ երկնաւոր թագաւորին եւ մերս երկրաւոր. եւ վասն այլ տիեզերաց իւրաքանչիւր եպիսկոպոսունք զատապարտին եթէ անփոյթ առնեն: Եւ ապա Հայք հաղորդեցան⁷ եւ եթէ մնայ ոք՝ հաղորդել ունի: Բայց զու տէր, ըստ թագաւորի հրամանին զվանդ կարգաւորեալ եւ մաքուր պահեալ զքաղաքող,:

Եւ ես նոյնպէս կարգաւորեցի որպէս թագաւորն հրամայեաց, այլեւայլ վանորայցոյ որ ի քաղաքիս եւ որ արտաքոյ, զոր միանգամ ծանուցին՝ ըստ եկեղեցւոյ կարգաւորեցի: Եւ ես թէպէտ եւ չյօժարէի յայլոց ի թագաւորութիւն⁸ այդպիսի ինչ գրել, բայց յորժամ չարալուր գիրն Հայոց ի լսելիս իմ եհաս, հարկաւորեցայ զրել. քանզի մեզ զհան Տեառն զիտելով չափ, ո՞վ եղբարք, ոչ է պարտ ծուլանալ...: Նոյնպէս եւ Սրբութեանդ ձերոյ պարտ է հովուել եւ վարդապետել զհաւատացեալ ձեզ յԱստուծոյ հօտդ ամենայն զգու-

⁶ Յովհաննէս Գ. Անտիոքացի պատրիարք Կ. Պոլսոյ: ⁷ Հմմտ. Յովհ. Եփեսացի, Եկեղ. Պատմ., Բ., 23. Ակիմեան, Եղիշէ, Գ., էջ 304/5: ⁸ Սուրբ Ս. Պարոյց † 579:

⁴ Տիրերիոս Բ.: ⁵ Պարսից հայտասի Հայերը:

շութեամբ...»: Կու տայ հաւատոյ հանդաւակ մը: «Եւ վասն զի Հայք յԱսորեաց խաբեցան, որ ելին արտաքոյ սրբոյ եկեղեցւոյ վասն նոյնիւր նոցա զսուրբ ժողովն Քաղիկոնի եւ անկան յաղանդն Յուլիանոսի Աղիկանասացւոյ, որ է սա ի բուսոյ որոմանն Դէոսկորի եւ Եւտիքի եւ Թէոփորոսի...: Իսկ այլքս, որ ի սոցանէ բուսան, այսինքն Տիմոթէոս Եղուբոս եւ Պետրոս Ծանրախոս, զոր(ս) Աղեքսանդրացի հայրապետս կոչեն, որք աքսորեցան վասն շար ամպարշտութեան իւրեանց...: Եւ զարձեալ Գայիոս, եւ Սեբեր եւ Պետրոս Անտիոքացի եւ Յուլիանոս Աղիկանասացի, որք նորածե իմն մուծին յաղանդն Եւտիքի... եւ եղին պատճառք կորուստեան անձանց իւրեանց եւ աշխարհի, զորոյ բարբաժմունս, որով այժմ հեռացան Հայք յեկեղեցւոյ, ասացուք...: Իսկ զսուրբ եւ զտիեզերական ժողովն Քաղիկոնի, զոր նոյն վեցին Հայքդ, որք մտրեցան ի ձեռն Արգիշտի ասորոյ եւ ելին արտաքոյ սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ...: Բայց ձեզ ոչ է պարտ զհետ Ասորեստանացոյ մտրել այլ զայլ զհետ պատուիրանաց տիեզերական եկեղեցւոյ Ս. Յարութեանն...:

Թէպէտ եւ ոչ զիտութեամբ ունիք զմիտս հերձուածող Դիոսկորի եւ զԱնտիոքացւոյն, որ զԱնմահ Սաղեցարդ աւելագրեցին ի Ս. Երրորդութեան ձայնի եւ իրրեւ ընդ պատուակաւ մուծին զաշխարհ ի միտս Եւտիքի հերձուածոցն: Եւ բազումք թէպէտ եւ ոչ գիտեն զմայր հերձուածողդ, այլ ունին ի սովորութենէ իրրեւ զուրդ, պարտ է ձեզ լսել աշխատասիրաց, յորժամ ծանուցին...:

Բայց վասն քո Երանութեանդ լուաք, եթէ կամակից ես բարեւ. եւ ընկալար Թուղթս երկուս ի Մակարոյ եւ յԵւաղոքոյ ի ձեռն բարեպաշտի եւ աշխատասիրի Թումասոս, որ ոչինչ պէտս ունի ի ձէնձ պատուի եւ մեծութեան, բայց միայն ուղոց ձերոց փրկութեան. վասն որոյ եւ զիս թախանձեաց զրել ըստ օրինակի նոցա, որ յառաջ քան զմեզ էին նախընկալք աթոռոյս Յակոբայ առաքելոյ. եւ ես ոչ յապարկեցի ծանուցանել զբարեպաշտութիւն կամողացոյ բարեպաշտութեան:

Ոչ միայն զմերս (Թուղթ) առաքեցաք, այլ եւ զՊատմառս չորից ուղղափառ ժողովոցն զրել հրամայեցաք, զի զիտեցէք, եթէ վասն որո՞ց հերձուածոց ժողովեցան եւ զինչ սահմանեցին: Եւ վասն յաւելադրութեան Ան-

տիոքացւոյն հրամայեցաք զրել զԵրանելեաց չորից հայրապետացն՝ զՀռոմայն եւ զայլոց ուղղափառ եպիսկոպոսաց, որ զԱնտիոքացւոյն չարափառութիւնսն յանդիմանեցին զրոց վկայութեամբ: Եւ վասն Յուլիանոսի Աղիկանացւոյ հերձուածոյն, որ զմարմինն Քրիստոսի օտարացոյց ի մերմէ բնութենէս եւ անպականացու անուանեաց մինչեւ յխաչելութիւնն եւ վասն այսր հերձուածոյ հրամայեցաք զրել զԵրանելեաց եպիսկոպոսացն, զՀռոմայն եւ Անտիոքացի զարքեպիսկոպոսացն: Ընդ նոսին եւ զԹուղթսն Կիւրդի արքեպիսկոպոսին, որ զՆեստորի չարափառութիւնն յանդիմանեաց: Չայս ամենայն թարգմանել եւ գրել հրամայեցաք աշխատասիրի Թումասու քահանայի եւ առաքել քում Բարեպաշտութեանդ. զի ոչ միայն իմով գրով, այլ քան զմեզ յաւազունից թղթովք ուսուցանիցես զեպիսկոպոսակիցս քո, որ զիտող եւ ճշմարիտ վկայութեամբ են հաստատեալ ի սուրբ աւետարանէն եւ յառաքելոցն թղթոց, եթէ որ կամիցի երկիւղելն Աստուծոյ ընդունել: Բայց միայն զու մի թագուցաներ եւ նեղեր զճշմարիտ վարդապետութիւն եկեղեցւոյ...:

Բայց լուաք, թէ ոմանք յիշխանութենէզ քումմէ բարեպաշտից նեղութիւն եւ հարածանս հատուցանեն... եւ զուրք լսէք եւ ներէք այդպիսի անօրէնութեան... որ քաւ եւ մի լիցի. այլ մեծաւ սրտմտութեամբ սաստել այնպիսեացն... զի ոչ են այնպիսիքն տեսուչք եկեղեցւոյ, այլ զայլք ապականիչք: Եւ Բարեպաշտութեանդ քում ոչ է պարտ տալ ձեռնադրութիւն առանց մեծի քննութեան. քանզի ուսաք, եթէ միտս ունիս եւ զիտութիւն եւ պատիւ եւ սէր եւ սաստ ի թագաւորաց. եւ կարող ես ամենայնիւ լմբեռանել որ ի բէն ձեռնադրեցան եւ անուղղայս զնայցեն...: Բայց այլոց աշխարհականաց տղիտաց պարտ է մեզմով վկայել եւ զբարեպաշտութիւն ծանուցանել...:

Չայս ամենայն ոչ թէ ուսուցանել, այլ յիշեցուցանել զիտութեանդ քում կամեցայ:

Ողջ լեր Տերամբ, Բարեպաշտօնակից մեր, եւ մեր ողջ եմք յոգորմութենէն Աստուծոյ»:

Արարատ, 1896, էջ 252—256:

Հայոց եւ Սիւնեաց եւ Աղուանից մէջ յուրած այս զաւանդարանական թեր եւ զէմ

վէճերը արծարծուեցան նաեւ Գուգարքի մէջ, որ Վրաստանի կը պատկանէր: Այս մասին կը պատմէ Narratio:

«Եւ եղև ժողով մեծ ի Կոստանդնուպոլիս ընդդէմ ճերտկոտաց ոմանց, զոր կոչեմք Հինգերորդ ժողով (573°): Եւ զի միաբանեցան (Հայք) ընդ նոսա, կոչեցին զսուրբ զրուսն Սրբոյն Սոփիայ կից յանուն նոցա, որ եւ մինչեւ յայսօր անուանեալ կոչի Գուսն Հայոց: Յայնժամ ուրեմն նոյնքն զՈրովիչնէս, զԵւագրիոս, զԻրիլիոս, զՆեստորեանս, զՅակոբիկեանս, զՅուլիանեանս, զԳայիանեանս եւ առ հասարակ զամենեւեան, որք միանգամ զՆեստորի ճերձուածն յանձինս բարձեալ բերէին: Իբրև զարձան նոքա յաշխարհն Հայոց՝ ոմանք մտադիւր յօժարութեամբ ընկարան զմիարանութիւնն. իսկ այլք ընդդէմ զարձան, յաւուրս Յովհաննու կաթողիկոսի. զորոց չէ այժմ խօսել մի ըստ միով: Արդ զբեցին (սոքա) թուղթ առ Արաւ կաթողիկոսն Աղուանից աշխարհին պէս զայս ձեւ օրինակի. Եկ, միարանեաց ընդ մեզ ի հաւատս. առա՛ զմի բնութիւն Քրիստոսի Աստուծոյ եւ (յաւել) ի Սուրբ Աստուած անդր զՈր ինչեացր վասն մեր: Այլ նա չա՛ն յանձն եւ անդրէն պատասխանի արար. Պետրոս եւ Գրիգորիոս, որք յառաջ քան զիսն կացին, այսպէս ասէին. Եւ ես ոչինչ յաւելից ի վերայ եւ ոչ բարձից ինչ ի բաց: Գրեցին զնոյն օրինակ եւ առ Վիրս (եւ առ Սիւնիս). սակայն եւ նոքա յաճախագոյնս ընդդէմ բարբառեալ չառին յանձն. բայց միայն Ուտիք, այս ինքն դաւառքն (կոչեցեալք) ըստ բարբառոյն Հայոց՝ Տաշիքք, Չորափոր եւ Գարդմանք, եւ ոմանք յԱրձախայ (հաճեալ հաւանեցան): Յաւուրս յայնտիկ պէսպէս յուզուեալ լինիէն ի պատճառս սպասամբութեան նախարարաց ընդ բազում աւուրս, եթէ ի Հոռոմէական (բաժնին Հայոց) եւ եթէ ի Պարսկականին. յոյդք եւ ինդիքք զհաւատոց, յաւուրս Կաթողիկոսացն Յովհաննու եւ Մովսիսի. եւ յերկարեալ ձգէին մինչեւ յառաջին ամն Սոսրովու որ թաղաւորեաց ի ձեռն Մարկայ կայսեր՝ մեծաւ զօրու Հոռոմոց» (Garitte, La narratio, § 89 եւ էջ 216—219. հմմտ. ՀԱ. 1953, էջ 470):

Սոսրով Բ. գահ բարձրացաւ 591ին: Նոյն տարւոյն կնքուեցաւ խաղաղութեան դաշինքը Պարսից եւ Հոռոմացեաց մէջ: Ինչպէս կ'երեւայ Աղուանից աշխարհը մեկուսի մնաց քսա-

նամեայ պատերազմներէն. բայց մասնակցեցաւ Վահրամ Միհրեանդակ Չորինի ապըստամբութեան:

Արաս վախճանեցաւ 595ին: Աթուրն վրայ յաջորդ ունեցաւ Վիրոյ կաթողիկոսը: (Շարունակելի:)

ՅՈՒՑԱԿ ԹԵ ՀՐԱՆԻ ՀՆՅԵՐԸՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ

(Շարունակելի:)

7.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՔ՝ 176: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 22.5 × 16.5: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 17 × 11: — ԹԵՐԹՔ՝ չեմ նշանակուած: — ՏՈՂՔ՝ 20: — ՆԻԻԹ՝ Մագաղաթ, բխագոյն: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ վերջէն քերի բաւական լաւ, սեւցած քիչ մը եւ նմանապէս քղեր կազմէն անշատուած: — ԿԱԶՄ՝ տախտակ, վրան կաշի քաշուած, զծագարդերով: — ՄԱԳԱՂԱՅ ՊԱՀՊԱՆՆԱԿ՝ չկայ: Փակամբները կանուած: — ԳԻՐ՝ բարդ գիր. յստակ գեղեցիկ, զանազան գոյներով: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր, երբեմն գոյնզգոյն, նաեւ ուկիով: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ քոչնագիր, սիրուն երփնեբանգ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ շատ, ստեղծ պարզ, բայց եւ գունակ գունակ: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ քղ. 28ա, 49բ, 73բ, 94ա, 118, 140ա. գոյնզգոյն ոսկեխառն, լաւ, քղ. 162ա—բ. կտրուած: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 11ա. խորանի մէջ Յիսուս, Պետրոս եւ Պողոս առաքեալները. իսկ յուսանցիմ վրայ՝ Գաւիթ եւ քղ. 140ա. «Եւ Մանուէլ» (գրո՞ղը քէ գծո՞ղը): — ԳԱՏԱՐԿ՝ չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԾԳԷՆ (1705) առաջ: — ԳՐԻԶ՝ անձագիր (Մանուէլ): — ՏԵՂԻ՝ անձագիր: ՍՏԱՅՈՂ՝ անձագիր: — ԿԱԶՄՈՂ՝ Յովհաննէս երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 10բ, 73ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպիակամութիւն քեհեղանարմակ Վարժապետեան ընտանիքի (1949):

Մատենան է՝ Սաղմոսարան:

Թղ. 1ա. «Երանելոյն Եպիփանու կալիկոպոսի Կիպրացոյ յաղագս երգոց Սաղմոսարանին: Զամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա ի հոգեկիր ձերոյն, բաւական համարեցաք պատմել փոքր ի շատէ»:

Թղ. 2ա. Եպիփանու Կիպրացոյ յաղագս սաղմոսաց Դաւթի: Արդ առեալ ասէ Սամուէլ զորուակ իւզոյն եւ աւծ գիւտիթ թաղաւոր կատարմամբ եւ խաղաց ի վերայ նորա Հոգի Տեառն յարէն յայնմանէ:

Թղ. 11ա. Գիրք Սաղմոսաց Դաւթի. Սաղմոս ի Դաւթի. Երանեալ է այր, որ ոչ

զնայ ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մեղանորացն ոչ եկաց եւ յաթոսս ժանտից ոչ նստաւ:

Յիշատակագրութիւններն են. Թղ. 10բ. «Վերասին կազմողս զեղկելի զերիս զՅովհաննէս երէցս յիշէք ի Քրիստոս եւ Աստուած սոյորմի ասէք զերոյս որ կապեց զքնարս Դաւթի ի թվին ՌՃԾԳԻ ի քաղաքն Կեսարիա ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսին եւ յիշողացդ Աստուած մեղաց թողութեան տացէ. ամէն: Հայր մեր որ յերկինս ես»:

Թղ. 73ա. Տրդատ Վրդ. Պալեան առաջնորդ Կեսարիայի եւ վանահայր Ս. Կարապետի թաղացի եւ միաբան Ս. Յակոբայ (Երուսաղէմ) կը մաղթէ զինքը յիշել:

8.

Ք Ա Ր Ո Ձ Գ Ի Ր Ք

ԹՈՒՂԹՔ՝ 74: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 20 × 15: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկաւն: — ՏՈՂՔ՝ 35: — ՆԻԻԹ՝ բուրդ դեղնագոյն: — ԿԱԶՄ՝ խաւաքար, վրան մագաղաթեայ քուրք մը փակցուած: — ՄԱԳԱՂԱՅ ՊԱՀՊԱՆՆԱԿ՝ հմմտ. վերք, երկաքաղիք Աւետարանի մը կատուածներ: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ երբեմն սեղ ձգուած է գրեյու կամար եւ երբեմն գրուած կարգ բաներ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ, սակայն առջեւն ու ետեւը պակաս, բայց ձեռագիրը միացուած կամ բուրդ դրուած եւ ուրիշ բաներ գրուած հմմտ. վարք: — ԳԻՐ՝ բարդ գիր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ, ԿԻՍԱՆՈՐԱՆՔ եւ ԽՈՐԱՆՔ՝ պարզ բաներ եւ սակաւ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 33ա—բ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԱ (1652): — ԳՐԻԶ՝ Պետրոս: — ՏԵՂԻ՝ անձագիր: — ՍՏԱՅՈՂ՝ անյայտ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 52ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ կը գտնուի Թեհեղան, Վարժապետեան ընտանիքի մօտ:

Մատենան է՝ Քարագիրք: Սկիզբը եւ կարեւոր մաս մը պակաս, սակայն առջեւը կան ուրիշ կտորները, ինչպէս եւ վերջը (հմմտ. վարք):

Թղ. 14ա. «Քարոզ վեցերորդ կիրակէին, վասն մահու եւ կատարածի յաշխարհի, ի բանն Արթուր կացէք զի ոչ զիտէք յորում ժամու տէր տանն գայցէ, յերկօրեա, եթէ ի մէջ զիշերի, եթէ ի հաւաթօսի: Նախախնամութիւն Աստուծոյ եւ բարերարութիւն յամենայն ժամ յայտնի է առ իւր արարածս որպէս հայր սիրէ զորդի եւ հանապազ խրատէ զնա եւ աչք եւ միտք ի վերայ նորա է»:

Թղ. 17բ. «Քարոզ ի բանն սուրբ Աւետարանին որ ասէ թէ Եղբուք խորագէտք իրբեւ զօձ... նախ զիտելի է զի որպէս մարդս մարմին եւ հոգի է, նոյնպէս սուրբ զրոց բանն հոգեւոր է եւ մարմնաւոր:

Թղ. 21բ. «Քարոզ ի բանն մարգարէին որ ասէ...: Զի խցեալ է զականջս իւր, զի մի լուրից նա զձայն թովչի... (թէ վասն զի՞նչ) պատճառի մարգարէն խօսի զի առ իւր բանն խորին է եւ ծածուկ վասն զի առակաւ խօսի որ իմաստնոց եւ արժանաւորացն յայտնի լինի»:

Թղ. 23բ. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Որ զանձն ի գործս իւր ոչ բժշկէ. եղբայր է նա այնոցիկ որ զանձինն առնիցէ. Անձն զրնական հոգին ասէ»:

Թղ. 28ա. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Մահ եւ կեանք ի ձեռն լեզուի է եւ որք ըմբռնեն զնա կերիցեն պտուղ նորա: Առաջին խրատ վասն մարմնաւոր կենացն է, ճշմարիտ մահու եւ կենաց...»:

(Անդ թղ. 32բ). «Որպէս զրեալ է. ի յերկիրն Քաջբերունի է վանք մի որ կոչի Մեծոփ եւ մօտ ի վանքն զիւլ մի փոքր եւ այր մի վայ կանչէր ի զերեզմանէն ի դուրս ի. տարի եւ վարդապետ մի սուրբ անունն Միսիքար եկեալ ի զիշերի, երաց զգերեզմանն խաչակնքեաց զնա եւ յարոյց զնա եւ հարցոյց զնա թէ ընդէ՞ր ոչ հանդչիս եւ նա ասաց թէ զան յիշոց տուեալ էի...»:

Թղ. 34ա. «Նորին զարձեալ վասն Յովհաննու ի բանն Մաղաքեայ, Առաքեցից զհրեշտակ իմ առաջի քս եւ պատրաստեցէ զճանապարհս քս: Բացից զբերանս մտաց եւ ասեց զհոգի չնորհաց...»:

Թղ. 37ա. «Նորին զարձեալ երրորդ քարոզ վասն Յովհաննու եւ գլխատմանն, ասէ Զայն բարբառոյ յանապատի պատրաստ արարէք: Ի բանս այս չորս իրս տեսանելի է առաջինն՝ որ ասէ. Ես ձայն երկրորդ բարբառոյ...»:

Թղ. 41ա. «Նորին զարձեալ ի նոյն խորհուրդ ի բանն որ ասէ. Պատուական է առաջի Տեառն մահ. վարդապետք ասեն թէ մահ նախ»:

Թղ. 43. «Նորին զարձեալ քարոզ վասն մահուն: Իսկ թէ ի կրօնաւորացն իցէ ննջեցեալն նոյնպէս պարտ է զի բերցեն յեկեղեցին...»: